ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զբոսաշրջության Խորհրդի մասին

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր, նպատակ ունենալով իրականացնելու զբոսաշրջության բնագավառում 1993 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունված համագործակցության Համաձայնագիրը,

մեծ նշանակություն տալով զբոսաշրջության ոլորտում համագործակցության հետագա զարգացմանը,

ձգտելով համակարգելու փոխգործակցությունը զբոսաշրջային գործունեության հիմնական ուղղություններով,

գիտակցելով, որ նման համագործակցությունը բխում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ժողովուրդների շահերից,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը զբոսաշրջության ոլորտում համագործակցության համակարգման նպատակով ստեղծում են Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զբոսաշրջության Խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ կազմված ԱՊՀ մասնակից պետությունների պետական իշխանության համապատասխան մարմինների ղեկավարներից:

Հոդված 2

Խորհուրդը քննարկում է հայեցակարգային հարցեր, սահմանում է զբոսաշրջության ոլորտում համագործակցության գերակա ուղղություններն ու ձևերը, սահմանված կարգով առաջարկներ է ներկայացնում ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի քննարկմանը՝ ուղղված զբոսաշրջության ոլորտում որոշակի խնդիրների լուծմանը:

Հոդված 3

Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զբոսաշրջության Խորհրդի Կանոնակարգին համապատասխան, որը սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասն է:

Հոդված 4

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները, որոնց մասնակից են իրենց պետությունները:

Հոդված 5

Սույն Համաձայնագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասը և ձևակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 6

Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում առաջացած վիճելի հարցերը շահագրգիռ Կողմերի միջև լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ընթացակարգերով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրած Կողմերի՝ նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ գրավոր ծանուցումն

ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Համաձայնագիրը ցանկացած պետության միանալու համար բաց է ավանդապահին համապատասխան փաստաթղթերը փոխանցելու ճանապարհով:

ԱՊՀ մասնակից պետությունների համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու վերաբերյալ փաստաթուղթն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

ԱՊՀ մասնակից չհանդիսացող պետությունների համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրած կամ միացած պետությունների՝ այդպիսի միանալու համաձայնության մասին վերջին ծանուցումը ավանդապահին հանձնելու օրվանից 30 օր հետո:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի դուրս գալու սույն Համաձայնագրից՝ վեց ամիս առաջ ավանդապահին իր դուրս գալու մասին գրավոր տեղեկացնելով և կարգավորելով Համաձայնագրի գործողության ընթացքում առաջացած ֆինանսական և այլ պարտավորություններ:

Կատարված է Աշգաբադ քաղաքում 2012 թվականի մայիսի 30-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի նրա հաստատված պատճենը:

Հավելված
Անկախ Պետությունների Համագործակցության
մասնակից պետությունների՝
զբոսաշրջության Խորհրդի մասին
2012թ. մայիսի 30-ի
համաձայնագրին կից

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զբոսաշրջության Խորհրդի մասին

Ընդհանուր դրույթներ

1.1. Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զբոսաշրջության Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծվել է 1993 թվականի դեկտեմբերի 23-ի՝ Զբոսաշրջության ոլորտում համագործակցության Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) իրագործման, ԱՊՀ մասնակից պետությունների և միջազգային զբոսաշրջային կապերի ընդլայնման և ամրապնդման նպատակով:

Խորհուրդը հանդիսանում է զբոսաշրջության բնագավառում ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմին և կոչված է կազմակերպելու և համակարգելու Պետությունների ղեկավարների խորհրդի, Կառավարությունների ղեկավարների խորհրդի, Արտաքին գործերի նախարարների խորհրդի և ԱՊՀ Տնտեսական խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը:

1.2. Խորհրդի հիմնական խնդիրն է աջակցել զբոսաշրջության ոլորտում պետական մարմինների, ազգային, տարածաշրջանային, միջազգային և այլ զբոսաշրջային կազմակերպությունների ուղղությամբ իրավահավասար և փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

1.3. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրությամբ, Համագործակցության շրջանակներում ընդունված որոշումներով ու պայմանագրերով և սույն Կանոնադրությամբ:

Խորհուրդը իր գործունեության համար հաշվետու է ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդին:

Խորհուրդն աշխատանքները կազմակերպում է իր մշակած և հաստատած ծրագրերի հիման վրա:

1.4. Խորհուրդը փոխգործակցում է ԱՊՀ գործադիր կոմիտեի, Համագործակցության այլ մարմինների, անհրաժեշտության դեպքում՝ միջազգային կազմակերպությունների քարտուղարությունների, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների պետական կառավարման մարմինների հետ:

Ամեն տարի Խորհուրդը իր գործունեության վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում ԱՊՀ

գործադիր կոմիտեին:

1.5. Խորհրդի կատարած աշխատանքի հաշվետվությունը սահմանված կարգով քննարկվում է Կառավարությունների ղեկավարների խորհրդի, Արտաքին գործերի նախարարների խորհրդի, ԱՊՀ Տնտեսական խորհրդի, Համագործակցության կանոնադրական և այլ մարմիններին կից՝ Համագործակցության մասնակից պետությունների Մշտական լիազոր ներկայացուցիչների խորհրդի, ինչպես նաև ԱՊՀ Տնտեսական խորհրդին կից՝ տնտեսական հարցերով հանձնաժողովի նիստերում:

1.6. Խորհուրդը ձևավորվում է ԱՊՀ մասնակից պետությունների՝ զբոսաշրջության ոլորտի պետական մարմինների ղեկավարներից: Խորհրդի նիստերին խորհրդի անդամին փոխարինող անձ ուղարկելու դեպքում նրա լիազորությունները պետք է լինեն հաստատված: Խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ընդգրկվել Խորհրդի քարտուղարության ղեկավարը, ինչպես նաև ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

Խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով, համապատասխան պայմանագրերի հիման վրա, կարող են ընդգրկվել ԱՊՀ մասնակից չհանդիսացող, սակայն խորհրդի նպատակներն ու խնդիրներն ընդունող պետությունների՝ զբոսաշրջության բնագավառի պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներ:

II. Խորհրդի գործառույթները

Խորհուրդն իր իրավասության սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները.

2.1. Ուսումնասիրում է պետական մարմինների, ազգային, տարածաշրջանային, միջազգային և այլ զբոսաշրջային կազմակերպությունների միջև զբոսաշրջության ոլորտում համագործակցության միտումները և հեռանկարները:

2.2. Վերլուծում է Համաձայնագրի, զբոսաշրջության ոլորտում համագործակցության այլ միջազգային պայմանագրերի իրականացման ընթացքը, մշակում և իրականացնում է զբոսաշրջության զարգացմանն ուղղված համատեղ ծրագրեր:

2.3. Աջակցում է զբոսաշրջության զարգացմանն ուղղված ազգային ծրագրերի մշակմանը և իրականացմանը:

2.4. Աջակցում է միջպետական համագործակցությանը, զբոսաշրջության ոլորտում գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, մասնագետների փոխանակմանը և որակավորման բարձրացմանը:

2.5. Աջակցում է զբոսաշրջության զարգացման նպատակով ներդրումների ներգրավմանն ուղղված՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների և միջազգային չափանիշներին համապատասխան որակյալ ծառայությունների ստեղծմանը:

III. Խորհրդի իրավունքները

Իր գործունեության ընթացքում խորհուրդն իրավունք ունի.

3.1. ԱՊՀ մասնակից պետությունների համապատասխան մարմիններից ստանալու իրենց խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկատվություն խորհրդի որոշումների կատարման վերաբերյալ:

3.2. Անհրաժեշտության դեպքում ստեղծել հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր՝ կազմված խորհրդի անդամներից և ներգրավված մասնագետներից, Խորհրդի գործունեության խնդիրների լուծման և Համաձայնագրի իրականացման նպատակով:

3.3. Խորհուրդն իր իրավասության շրջանակներում ընդունում է որոշումներ և հանձնարարականներ, իսկ անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում ԱՊՀ մասնակից պետությունների Կառավարությունների ղեկավարների խորհրդի քննարկմանը:

IV. Խորհրդի աշխատանքի կազմակերպումը և կարգը

4.1. Խորհրդի նիստերն անց են կացվում ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, և համարվում են իրավազոր, եթե նիստերին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն կեսը:

Հերթական նիստի անցկացման վայրը որոշվում է խորհրդի անդամների նախնական համաձայնությամբ:

Խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել ցանկացած ԱՊՀ մասնակից պետության նախաձեռնությամբ:

4.2. Խորհրդի նախագահությունը իրականացվում է հաջորդաբար՝ յուրաքանչյուր ԱՊՀ մասնակից պետության կողմից, ի դեմս պետության ներկայացուցչի, ըստ ԱՊՀ մասնակից պետության անվանման՝ ռուսերենի այբբենական կարգով, որպես կանոն՝ մեկ տարվա ընթացքում:

Նախորդող և հաջորդող նախագահները հանդիսանում են խորհրդի համանախագահներ: Խորհրդի

նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում Խորհրդի նախագահի պարտականությունները կատարում է խորհրդի համանախագահներից որևէ մեկը:

4.3. Նախագահը կազմակերպում է խորհրդի աշխատանքը, ներկայացնում է Խորհուրդը Պետությունների ղեկավարների խորհրդի, Կառավարությունների ղեկավարների խորհրդի և Անկախ Պետությունների Համագործակցության այլ մարմինների նիստերին՝ խորհրդի գործունեության հետ կապված հարցերով:

4.4. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի այն անդամները, որոնք համաձայն չեն խորհրդի որոշմանը, կարող են արտահայտել իրենց հատուկ կարծիքը, ինչը ներառվում է նիստի արձանագրության մեջ:

Խորհրդի որոշումները հանձնարարական բնույթի են:

4.5. Խորհրդի որոշմամբ դիտորդի կարգավիճակով Խորհրդի նիստերին կարող են մասնակցել շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ազգային զբոսաշրջային կազմակերպությունների, ԱՊՀ մասնակից պետությունների ընկերությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

4.6. Խորհրդի գործունեության կազմակերպատեխնիկական և տեղեկատվական ապահովումն իրականացնում է խորհրդի քարտուղարությունը:

Քարտուղարության գործառույթներն իրականացնում է զբոսաշրջության ոլորտում այն պետական իշխանության մարմինը, որի ղեկավարը նախագահում է Խորհրդում՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանման հետ համատեղ:

Խորհրդի քարտուղարության ղեկավարը հանդիսանում է խորհրդում նախագահող պետության համապատասխան պետական իշխանության մարմնի ներկայացուցիչը, իսկ քարտուղարության ղեկավարի տեղակալը՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

4.7. Խորհրդի նիստերի կազմակերպման ֆինանսավորումն ապահովվում է ընդունող ԱՊՀ մասնակից պետության համապատասխան պետական իշխանության մարմինների հաշվին: Խորհրդի անդամների և նիստերի մասնակիցների գործուղումների ծախսերը հոգում են ԱՊՀ մասնակից պետությունների՝ գործուղող պետական իշխանության մարմինները և կազմակերպությունները:

Հայաստանի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2013 թ. հունիսի 14-ին: